ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2017/1
ԼՐԱՑՈՒՑԻՉ

ք. Երևան «19» հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Շ. Ավագյանի, որը գործում է ՀՀ ԱԳՆ կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս տնօրեն Ս.Գրիգորյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ հաշվի առնելով «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը, ըստ որի «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» հավելվածը, ինչպես նաև այն, որ Կապալառուն «Պետական կարիքների համար աշխատանքների կատարման կապալի մասին» ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքած 2000թ. օգոստոսի 11-ի պայմանագրի համաձայն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» հրատարակումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. 2007թ. հունիսի 29-ին կնքված պայմանագրի 2.1.1 և 4.1 կետերը շարադրել.

2.1.1. Պատվիրատուի հանձնարարությամբ հրատարակել Տեղեկագիրը՝ 250 օրինակ տպաքանակով

4.1 Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 8 400 000 (ութ միլիոն չորս հարյուր հազար) դրամ (ներառյալ բոլոր հարկերը), մեկ մամուլի միջին գինը՝ 140 դրամ, որը որոշված է կողմերի համաձայնությամբ և ներառում է ընկերության միջոցներով կատարված նախատպագրական (թղթե կրիչների վրա տրամադրված միջազգային պայմանագրերի էլեկտրոնային տարբերակների կազմումը, պայմանագրերի բնօրինակների հաստատված պատճենների համադրումը դրանց էլեկտրոնային տարբերակների հետ, տրամադրված տեքստերի հայերեն և օտարալեզու տեքստերի համադրումը և պայմանագրերի հայերեն և օտարալեզու տեքստերի սրբագրումը, համակարգչային մակետի կազմում, շուռտիպի պատրաստում) և այլ աշխատանքների գինը և առաքման ծախսերը՝ հաշվի առնելով, որ պայմանագրերի հրապարակման ներկայացված ծավալը չի գերազանցելու մեկ համարի համար տարեկան 120 տպագրական մամուլը:

Պատվիրատուն Կապալառուին իր կատարած աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ դրամական միջոցներ Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների սահմանաչափի: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4.2 Կողմերի համաձայնությամբ Տեղեկագիրը հրատարակվում է յուրաքանչյուր կիսամյակի համար:

2. Եզրափակիչ դրույթներ

Սույն Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 օրինակից և հանդիսանում է 29.06.2007թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտաքին
գործերի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարության տուն 2
Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011196202
ՀՎՀՀ 02527728

Գլխավոր քարտուղար՝
Շ. Ավագյան

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
For Financial Transactions
02527728

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ

ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Հ/հ 163008203131
Հայէկոնոմբանկ
ՀՎՀՀ 02538276

Տնօրեն՝
Ս. Գրիգորյան

19.01.17

19.01.17թ.